



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ԱԽ-2-Ո-2

2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԼՂՀ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
ԿԱՐԵՆ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

նախագահությամբ Ա. Դանիելյանի

մասնակցությամբ ԱԽ անդամներ Կ. Ղարայանի, Կ. Մաղյանի, Հ.Խաչատրյանի,

Մ.Ավանեսյանի, Կ. Մարդանյանի, Ա.Լազարյանի,

Շ. Մաֆարյանի, Մ. Մաֆարյանի

մասնակցությամբ

դատավոր

Կ. Բեզլարյանի

ԼՂՀ արդարադատության նախարար

Ն. Նարիմանյանի

քարտուղարությամբ

Գ. Հովհաննիսյանի

2010 թվականի հունիսի 4-ին Ստեփանակերտ քաղաքում՝ դռնփակ նիստում, քննարկելով ԼՂՀ արդարադատության նախարարի միջնորդությունը՝ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /այսուհետ՝ առաջին ատյանի դատարան/ դատավոր Կ. Բեզլարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը.

ԼՂՀ արդարադատության նախարարի 2010թ. մարտի 24-ի թիվ 8/1գ հրամանով առաջին ատյանի դատարանի դատավոր Կ. Բեգլարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել քաղաքացի Վլադիմիր Ադվերիկի Հայրապետյանի՝ ԼՂՀ արդարադատության նախարարին հասցեագրված դիմումը:

2. Կարգապահական խախտման վերաբերյալ ԼՂՀ արդարադատության նախարարի եզրակացությունը.

ԼՂՀ արդարադատության նախարարը ս.թ. մայիսի 4-ին ԼՂՀ արդարադատության խորհրդին /այսուհետ՝ Արդարադատության խորհուրդ/ է ներկայացրել միջնորդություն՝ առաջին ատյանի դատարանի դատավոր Կ. Բեգլարյանին արդարադատություն իրականացնելիս նյութական և դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ թույլ տալու համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին: Միջնորդությանը կցվել են առաջին ատյանի դատարանի դատավոր Կ. Բեգլարյանի կարգապահական խախտման վերաբերյալ ԼՂՀ արդարադատության նախարարի եզրակացությունը:

Ըստ եզրակացության՝

1. ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի /այսուհետ՝ քաղ. դատ. օր./ 80-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն՝ դատավորը պարտավոր է վարույթ ընդունել օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը: Մինչդեռ ի խախտումն վերը նշված հոդվածի պահանջների, դատավորի կողմից 2009թ. նոյեմբերի 6-ին թվագրված որոշմամբ հայցադիմումը անհիմն կերպով վերադարձվել է՝ հայցադիմումի ձևին և բովանդակությանը չհամապատասխանելու և համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած հաշվարկային դրույքի վերաբերյալ հայցվորի կողմից համապատասխան ապացույց չներկայացնելու հիմքերով, սահմանելով եռօրյա ժամկետ՝ խախտումները վերացնելու և հայցադիմումը կրկին ներկայացնելու համար:

Դատավոր Կ. Բեգլարյանի կողմից կայացված որոշման անհիմն լինելու պատճառաբանությունները տրվում են ԼՂՀ վերաքննիչ դատարանի 01.12.2009թ. որոշման մեջ:

2. Համաձայն քաղ. դատ. օր. 82-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների՝ դատարանը, օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, հայցադիմումը վերադարձնելու մասին կայացնում է որոշում՝ հայցադիմումն

ստանալու օրվանից եռօրյա ժամկետում որոշումը, հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը պատշաճ ձևով ուղարկելով հայցվորին: Նույն օրենսգրքի 136-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված դատարանի որոշումը պատշաճ ձևով ուղարկվում է գործին մասնակցող անձանց՝ որոշումը կայացնելու օրվանից եռօրյա ժամկետում:

Կարգապահական վարույթի շրջանակներում հնարավոր չի եղել հաստատել կամ հերքել հայցվորի ներկայացուցչի դիմումում նշված այն փաստարկը, որ դատավորը հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը կայացրել է նոյեմբերի 18-ին, այսինքն 15 օր հետո, և որոշման մեջ դրա ընդունման ամսաթիվը նշել է 06.11.09թ.: Այնուամենայնիվ, նյութերի ուսումնասիրմամբ հաստատվում է, որ ի խախտումն վերը նշված հոդվածների պահանջների, 06.11.09թ. թվագրված որոշումը դատավորի կողմից հայցվորի ներկայացուցիչին առձեռն հանձնվել է 18.11.09թ.:

3. Համաձայն քաղ. դատ. օր. 134-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների՝ ի թիվս այլոց, առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ: Մինչդեռ, ի խախտումն վերը նշված հոդվածի պահանջների, Կ. Բեգլարյանի կողմից հայցադիմումը վերադարձնելու և վարույթ ընդունելու մասին որոշումների մեջ, որպես դրանց ընդունման հիմք վկայակոչվել են նշված որոշումների հետ որևէ առնչություն չունեցող քաղ. դատ. օր. 87-րդ, 90-րդ, 92-րդ և 144-րդ հոդվածները.

4. Համաձայն քաղ. դատ. օր. 86-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների՝ հակընդդեմ հայցը հարուցվում է հայց հարուցելու ընդհանուր կանոններով: Իսկ նույն օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների համաձայն՝ դատավորը, օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, հայցադիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում հայցադիմումի ընդունումը չմերժելու կամ դիմումը չվերադարձնելու դեպքում կայացնում է դա ընդունելու մասին որոշում, որում նշվում են նաև գործի քննության ժամանակը և վայրը:

Նշված հոդվածների վերլուծությունից երևում է, որ հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու համար անհրաժեշտ է առանձին ակտի ձևով կայացնել որոշում:

Կարգապահական վարույթի շրջանակներում հնարավոր չի եղել հաստատել կամ հերքել հայցվորի ներկայացուցչի դիմումում նշված այն փաստարկը, որ դատավորը հակընդդեմ հայցը վարույթ է ընդունել առանց ընթերցելու և համապատասխան որոշում կայացնելու, համոզված լինելով, որ այն համապատասխանում է հայցադիմումի ձևին և բովանդակությանը, քանի որ թիվ 1707/02/09 քաղ. գործում առկա է առանձին ակտի ձևով կայացված դատարանի որոշում՝ հակընդդեմ հայցն վարույթ ընդունելու, քաղաքացիական գործ հարուցելու և այն դատական քննության նշանակելու մասին:

Մինչդեռ, ԼՂՀ արդարադատության նախարարը անհրաժեշտ է համարել արձանագրել քաղաքացիական գործի ուսումնասիրությամբ հայտնաբերված հետևյալ հանգամանքները.

1. հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու, քաղաքացիական գործ հարուցելու և այն դատական քննության նշանակելու մասին որոշումը թվագրված է 11.02.2010թ., որն ի խախտումն քաղ. դատ. օր. 136-րդ հոդվածի պահանջների, հայցվոր կողմին պատշաճ ձևով չի ուղարկվել կամ հանձնվել.

2. ըստ վերը նշված որոշման՝ դատաքննությունը նշանակվել էր 2010թ. դեկտեմբերի 24-ին.

3. ըստ դատական նիստի արձանագրության հերթական դատական նիստը տեղի է ունեցել 12.02.2010թ., որի ընթացքում պատասխանողը հայտարարել է, որ «երեկ հակընդդեմ հայց եմ ներկայացրել դատարան»: Այնուհետև, նախագահողը հայտարարում է ընդմիջում՝ 10 րոպե ժամանակով, որից հետո դատական նիստի քարտուղարը զեկուցում է, որ «հեռախոսով կապվել է առաջին ատյանի դատարանի գրասենյակի պետի հետ, որը հայտնել է, որ Ն.Հայրապետյանը հակընդդեմ հայց է ներկայացրել դատարան»: Դրանից հետո դատարանը որոշում է հակընդդեմ հայց ներկայացնելու կապակցությամբ դատաքննությունը հետաձգել և նշանակել 26.02.2010թ.:

Փաստորեն ստացվում է, որ 11.02.2010թ. դատավորը որոշում է կայացնում հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու, քաղաքացիական գործ հարուցելու և այն դատական քննության նշանակելու մասին, այդ այն դեպքում, երբ հակընդդեմ հայցի առկայության մասին դատարանը տեղեկացվում է 12.02.2010թ. պատասխանողից և առաջին ատյանի դատարանի գրասենյակի պետից:

Ըստ եզրակացության՝ հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու, քաղաքացիական գործ հարուցելու և այն դատական քննության նշանակելու մասին որոշումը կարված է քաղաքացիական գործում 38-րդ էջից հետո՝ «38ա» համարակալմամբ:

Վերոշարադրյալը հիմք է տալիս ենթադրելու, որ հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու, քաղաքացիական գործ հարուցելու և այն դատական քննության նշանակելու մասին որոշումը դատավորի կողմից կայացվել է ոչ թե որոշման մեջ նշված օրը՝ 11.02.2010թ., այլ այն կազմվել է հետագայում՝ «իբր» թույլ տրված խախտումները վերացնելու նպատակով:

5. Համաձայն քաղ. դատ. օր. 139-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների՝ դատական նիստի պարզ թղթային եղանակով արձանագրման դեպքում գրավոր արձանագրության պատճենը գործին մասնակցող անձանց գրավոր դիմումի հիման վրա տրամադրվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը: «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է դատարան տրվող հայցադիմումների,

դիմումների ու գանգատների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը: Դատավորի կողմից վկայակոչված՝ վերոհիշյալ հոդվածի 10-րդ կետով, ինչպես նաև այդ հոդվածի որևէ այլ կետով դատական նիստի գրավոր արձանագրության պատճենը տրամադրելու համար պետական տուրք նախատեսված չէ: Հետևաբար, դատական նիստի գրավոր արձանագրության պատճենը գործին մասնակցող անձանց գրավոր դիմումի հիման վրա պետք է տրամադրվի առանց պետական տուրք գանձելու: Մինչդեռ, ի խախտումն օրենքի վերը նշված հոդվածների պահանջների, դատավորի կողմից երկու անգամ՝ 15.03.2010թ. և 18.03.2010թ. դատական նիստի գրավոր արձանագրության պատճենը տրամադրելու վերաբերյալ հայցվորի ներկայացուցչի դիմումները անհիմն մերժվել են:

3. Դատավորի բացատրություններում բերած փաստարկները ԼՂՀ արդարադատության նախարարի կողմից հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ.

Առաջին ատյանի դատարանի դատավոր Կ. Բեգլարյանը ԼՂՀ արդարադատության նախարարին 2010թ. մարտի 31-ին ներկայացրել է բացատրություն հետևյալ բովանդակությամբ.

«Չնայած դատական նիստի արձանագրության պատճենը կողմի դիմումի հիման վրա տրամադրելու հանգամանքը ուղղակիորեն չի կարգավորվում «Պետական տուրքի մասին» ԼՂՀ գործող օրենքով, սակայն գտնում եմ, որ նման ծառայության մատուցման համար պարտադիր կարգով պետք է գանձվի համապատասխան պետական տուրք, ինչը բխում է հիշյալ օրենքի 2, 3, 7, 9, 22, 31 հոդվածների տրամաբանական և համակարգային վերլուծությունից:

Այսպես, նշված օրենքի 31-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն պետական տուրքը գանձվում է մինչև համապատասխան ծառայության մատուցումը..., եթե նույն օրենքով այլ կարգ սահմանված չէ:

Տվյալ օրենքի 22-րդ հոդվածը չի պարունակում կողմի դիմումի հիման վրա դատական նիստի արձանագրության պատճենը տրամադրելու վերաբերյալ պետական տուրքի գծով արտոնություն, ինչպես նաև դրանում սահմանված չէ այլ կարգ:

Հետևաբար՝ օրենքի 7-րդ հոդվածի ա/ կետի ուժով նշված փաստաթուղթը կողմին անվճար /առանց պետական տուրքի վճարման/ տրամադրելը անթույլատրելի է:

Օրենսդիրը դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճենները կողմերին տալու իրավահարաբերությունը /պետտուրքի մասով/ կարգավորել է

հողված 9-ի 10-րդ և 11-րդ կետերով, որտեղ նշված չէ «դատական նիստի արձանագրություն» կոչվող փաստաթուղթը, որպիսի հանգամանքը պայմանավորված էր նրանով, որ ի տարբերություն 17.12.2008թ. ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, նախկինում գործող Օրենսգրքով նախատեսված չէր կողմի դիմումի հիման վրա դատական նիստի արձանագրության պատճենը տրամադրելու հնարավորություն /իրավունք/: Իսկ երբ օրենսդիրը կողմին ընձեռել է նշված փաստաթուղթը ստանալու հնարավորություն, «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածում համապատասխան փոփոխման չի ենթարկվել, որպիսի հանգամանքը ամենին չի նշանակում, որ դատարանը պարտավոր է կողմին անվճար /առանց պետական տուրքի գանձման/ տրամադրել նշված փաստաթուղթը՝ և ցանկացած, նույնիսկ N-րդ անգամ գրավոր դիմում ներկայացնելուց հետո կողմին տրամադրել դատական նիստի արձանագրության պատճենները /N քանակությամբ/: Պետք է նշեմ, որ նույնիսկ առաջին անգամ դատական նիստի արձանագրության պատճենը գործով վճիռը ստացած կողմին տրամադրելիս դատարանը նրան փաստորեն տրամադրում է նաև վճռի եզրափակիչ մասի, ինչպես նաև դատական նիստի արձանագրությունում զետեղված որոշումների կրկնօրինակները, որոնց տրամադրման համար հստակեցված է պետտուրքի դրույքաչափը /9-րդ հոդվածի 10-րդ կետ/: Հաշվի առնելով մասի և ամբողջի հարաբերակցությունը, ինչպես նաև կողմի ցանկությունը, դատարանը չի կարող կողմին տրամադրել դատական նիստի արձանագրության պատճենը՝ առանց վճռի եզրափակիչ մասի, ինչպես նաև առանց որոշումների, որպիսինը լրացուցիչ հիմք է՝ նշված ծառայության մատուցման համար պետտուրք գանձելու:

Ինչ վերաբերվում է թիվ 1707/02/09 քաղ. գործով հայցադիմումը վերադարձնելու և հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումներում տեղ գտած «խախտումներին» պետք է նշեմ, որ հայցադիմումը վերադարձնելու մասին դատարանի որոշման դեմ դիմողը բողոք է ներկայացրել վերաքննիչ դատարան, որի որոշմամբ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը վերացվել է, իսկ հայցադիմումն ընդունվել է վարույթ և գործը քննելուց հետո սկզբնական և հակընդդեմ հայցերը դատարանի վճռով մերժվել են: Հայցվորի ներկայացուցիչ, դիմող Վ.Հայրապետյանի համար վերը նշված «խախտումները» որևէ իրավական հետևանքներ չեն առաջացրել, իսկ թիվ 1707/02/09 քաղ. գործով հայցվորի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք՝ սկզբնական հայցը բավարարելու պահանջով:

Այսպիսով, գտնում եմ, որ նշված անձի դիմումը չի պարունակում իմ կողմից կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի կատարման մասին առերևույթ հիմքեր, ուստի տվյալ անձի դիմումները, ուղղված ԼՂՀ արդարադատության նախարարին իբր իմ կողմից խախտումներ թույլ տալու մասին, միանգամայն անհիմն են»:

Առաջին ատյանի դատարանի դատավոր Կ. Բեգլարյանը ԼՂՀ արդարադատության նախարարին 2010թ. ապրիլի 28-ին ներկայացրել է լրացուցիչ բացատրություն, որում մասնավորապես նշել է.

«Ս.թ. ապրիլի 22-ին ստացել եմ ինձ կարգապահական պատասխանատվության ենթարկելու պահանջով ԼՂՀ արդարադատության խորհրդին միջնորդությամբ դիմելու մասին ուղեկցող գրությունը, Ձեր 21.04.2010թ. թիվ 12գ հրամանը, իմ կողմից թիվ 1707/02/09 քաղաքացիական գործով թույլ տրված կարգապահական խախտման մասին Ձեր 21.04.2010թ. եզրակացությունը և կարգապահական վարույթի նյութերը /33 թերթիգ/:

2009թ. նոյեմբերի 4-ին Ա. Օհանյանը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Ն. Հայրապետյանի՝ 4600 ԱՄՆ դոլար բռնագանձելու պահանջի մասին, որը դատարանի 06.11.2009թ. որոշմամբ վերադարձվել է՝ հայցադիմումում բռնագանձման ենթակա հաշվարկը հայցվորի կողմից նշված պահանջներին չհամապատասխանելու, հայցադիմումին կից ՀՀ կենտրոնական բանկի սահմանված հաշվարկային դրույքի մասին ապացույց չներկայացնելու հիմնավորմամբ:

Որոշման կայացման ժամանակ իրականում ղեկավարվել են 17.12.2008թ. ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ, 80-րդ, 82-րդ և 134-րդ հոդվածների պահանջներով, որոնց բովանդակությունն է պարունակում նշված որոշումը: Սակայն նշված հոդվածների փոխարեն որոշման մեջ նշվել են նախկինում գործող՝ 17.06.1998թ. ԼՂՀ/ՀՀ/ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ, 90-րդ, 92-րդ և 144-րդ հոդվածները, որոնք բովանդակային առումով համապատասխանում են նշված նորմերին, իսկ այդպիսի հանգամանքը պայմանավորված է եղել նրանով, որ տվյալ որոշման տպագրումը իրականացվել է համակարգչում առկա՝ նախկինում կայացված որոշումների պատճենահանման և որոշակի ձևափոխման արդյունքում:

19.11.2009թ. հայցվորի ներկայացուցիչ Վ. Հայրապետյանը /որը նախկինում գործին չի մասնակցել/ հայցադիմումը վերադարձնելու որոշման դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 01.12.2009թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է և դատարանի 06.11.2009թ. որոշումը վերացվել է:

Նյութերն ստանալուն պես դատարանի 03.12.2009թ. որոշմամբ Ա. Օհանյանի հայցադիմումն ընդունվել է վարույթ, հարուցվել է քաղաքացիական գործ և այն նշանակվել է դատաքննության 24.12.2009թ.: Նշված օրը դատական նիստը հետաձգվել է՝ փաստաբան /ներկայացուցիչ/ հրավիրելու պատասխանողի միջնորդության հիման վրա: 12.01.2010թ. դատական նիստը հետաձգվել է՝ պատասխանողի կողմից իրավապահ մարմիններ դիմում ներկայացնելու և նյութերը ստանալու կապակցությամբ: Իսկ 12.02.2010թ. դատական նիստի հետաձգման պատճառ է հանդիսացել 11.02.2010թ. պատասխանողի կողմից հակընդդեմ հայց ներկայացնելու հանգամանքը: Դատարանի 12.03.2010թ. վճռով մերժվել են

Ա. Օհանյանի և Ն. Հայրապետյանի հակընդդեմ հայցերը: Վճռի հրապարակմանը չներկայացած հայցվորի ներկայացուցիչը /հայցվորը որևէ նիստի չի ներկայացել/ նույն օրը տեղեկանալով հայցը մերժելու մասին, դատարանի կենտրոնական գրասենյակ դիմում է ներկայացրել դատական նիստի արձանագրության պատճենն ստանալու պահանջով, որին ի պատասխան նրան առաջարկվում է դիմումին կից ներկայացնել 1450 դրամ որպես պետուրք պետբյուջեի օգտին վճարելը հավաստող անդորրագիրը: Փոխարենը, 17.03.2010թ. նույն անձը կրկին անգամ դիմում է ներկայացնում դատարանի կենտրոնական գրասենյակ նույն պահանջով, որում օգտագործում է փաստաբանին ոչ վայել արտահայտություններ ու ստանալով հերթական մերժումը, հաջորդ օրը՝ 19.03.2010թ., դիմում է ներկայացնում ԼՂՀ արդարադատության նախարարին՝ ինձ կարգապահական պատասխանատվության ենթարկելու խնդրանքով: Դիմողը ԼՂՀ դատական օրենսգրքի 101-րդ, 103-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, նույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի վկայակոչմամբ խնդրել է հարուցել կարգապահական վարույթ, դիմումին կից ներկայացնելով դատական նիստի արձանագրության պատճեն ստանալու մասին իր դիմումների և պատասխան գրությունների պատճենները /2+2=4թերթից/: Ընդ որում անձը չի միջնորդել ի լրումն այդ դիմումի նոր դիմում կամ նյութեր ներկայացնելու վերաբերյալ ու այն ընդունվել և ընթացքավորվել է: Այնուհետև նույն անձը 23.03.2010թ. ներկայացրել է իր երկրորդ դիմումը, որում մատնանշել է նշված գործով իբր տեղի ունեցած բազմաթիվ դատավարական և նյութական իրավունքի նորմի կոպիտ խախտումների մասին, խնդրելով միացնել իր երկրորդ դիմումը նրա 19.03.2010թ. դիմումին, այս անգամ արդեն չնշելով դիմումը նախորդ դիմումին միացնելը կարգավորող իրավական հիմքը, ինչպես նաև չնշելով երկրորդ իր դիմումին կից ներկայացրած տասը թերթից բաղկացած փաստաթղթերի տեսակը, ինչը այնուամենայնիվ արգելք չի հանդիսացել երկրորդ դիմումը նույնպես ընթացքավորելու, նախորդ դիմումին միացնելու և երկու դիմումները «մեկ վարույթում» քննարկելուն:

Անհրաժեշտ եմ համարում նշելու նաև, որ դատական նիստի արձանագրության պատճենը գործին մասնակցող անձանց գրավոր դիմումի հիման վրա տրամադրելու համար նախնական պետուրք գանձելու խնդիրը վիճահարույց հարցերից է: Այսպես՝ որոշ փորձառու դատավորներ և փաստաբաններ նույնպես կիսում են 31.03.2010թ. իմ բացատրությունում արտացոլված կարծիքը, թեպետև կան հակառակը պնդողները: Ուստի տվյալ հարցին վերջնական լուծում տալու ու դիմողի վկայակոչած անհիմն փաստարկներին պատշաճ գնահատական տալու նպատակով միջնորդում եմ կատարել լրացուցիչ ստուգումներ:

Պետք է նշեմ նաև, որ դատարանի Ասկերանի նստավայրում վերջին մեկ տարվա ընթացքում համակարգչի օպերատորի պաշտոնում աշխատել են չորս տարբեր անձինք, նստավայրում առկա է ընդամենը մեկ, այն էլ հնացած համակարգիչ՝ միակ տպիչ սարքով, որի «կարտրիջ» կոչվող սարքավորումը նշված ժամանակահատվածում արդեն իսկ պիտանի չէր օգտագործման /նորը ստացել ենք

22.04.2010թ./: Իսկ աշխատանքի ծանրաբեռնվա-ծության նման պայմաններում որոշ թերություններ և բացթողումներ, կարծում եմ, կարող են գոյություն ունենալ, մինչդեռ մենք ձգտում ենք դրանց քանակը հասցնել նվազագույնի: Ընդ որում առկա հիմնախնդիրների մասին հայցվորի ներկայացուցիչը բավականին չափով տեղեկացված էր /նրան գրեթե ամեն օր կարելի է տեսնել դատարանի ընդհանուր բաժնում կամ դատարանի տարածքում/: ՈՒ կարծում եմ, որ դատական նիստի արձանագրությանը ծանոթանալու իրական նպատակ նա չի էլ ունեցել, հակառակ դեպքում կարող էր տեղում անվճար ծանոթանալու այդ ծավալուն փաստաթղթին: Համենայն դեպս, ոչ նրա, ոչ էլ որևէ կողմի համար վերը շարադրված բացթողումները որևէ իրավական հետևանքներ չեն առաջացրել, որևէ լուրջ, անհաղթահարելի խոչընդոտների կամ սահմանափակումների առիթ չեն հանդիսացել, ուստի երկու դիմումներում նշված թերությունները, կարծում եմ, արդարացի չէ դիտարկել իբրև ակնհայտ և կոպիտ խախտումներ»:

4. Կարգապահական պատասխանատվության հարցի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Արդարադատության խորհուրդը հիմք է ընդունում արձանագրված հետևյալ փաստերը.

1. 2009թ. նոյեմբերի 3-ին քաղաքացի Ա. Օհանյանը հայց է ներկայացրել առաջին աստիճանի դատարան ընդդեմ Ն.Հայրապետյանի՝ պարտքի գումարի բռնագանձման պահանջի մասին, որը դատարանում մուտքագրվել և 04.11.2009թ. հանձնվել է դատավոր Կ.Բեգլարյանին:

2. Առաջին աստիճանի դատարանի 2009թ. նոյեմբերի 6-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է: Որոշման մեջ, որպես վերադարձման հիմք, վկայակոչվել են քաղ. դատ. օր. 87-րդ, 92-րդ և 144-րդ հոդվածները:

3. ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2009թ. դեկտեմբերի 1-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձնելու մասին վերը նշված որոշումը վերացվել է:

4. Առաջին աստիճանի դատարանի 2009թ. դեկտեմբերի 03-ի որոշմամբ հայցադիմումը վարույթ է ընդունվել: Որոշման մեջ, որպես դրա ընդունման հիմք, վկայակոչվել են քաղ. դատ. օր. 87-րդ և 90-րդ հոդվածները:

5. 2010թ. փետրվարի 11-ին պատասխանողի կողմից ներկայացվել է հակընդդեմ հայց, որը նույն օրը թվագրված որոշմամբ դատավորի կողմից վարույթ է ընդունվել և նշանակվել դատաքննության 2010թ. դեկտեմբերի 24-ին: Նշված որոշումը քաղաքացիական գործում կարվել է թիվ 38ա համարի տակ և պատշաճ ձևով չի ուղարկվել կամ հանձնվել կողմերին:

6. 2010թ. մարտի 12-ին, դատարանի վճիռը հրապարակելուց հետո, հայցվորի ներկայացուցիչը դիմում է ներկայացրել դատական նիստի արձանագրության

պատճենը ստանալու համար, սակայն դատավորի կողմից նշված դիմումը 15.03.2010թ. գրավոր մերժվել է, այն պատճառաբանությամբ, որ համաձայն «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետի պահանջների դրա համար անհրաժեշտ է վճարել պետական տուրք՝ 1450 դրամի չափով:

7. 2010թ. մարտի 17-ին հայցվորի ներկայացուցիչը կրկին անգամ դիմում է ներկայացրել դատական նիստի արձանագրության պատճենը ստանալու համար, ինչը նույն պատճառաբանությամբ դատավորի կողմից 18.03.2010թ. մերժվել է:

5. Արդարադատության խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննարկելով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Կարեն Բեգլարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, լսելով ԼՂՀ արդարադատության նախարարին, դատավորի բացատրությունները, ուսումնասիրելով վարույթի նյութերը և հետազոտելով ապացույցները՝ Արդարադատության խորհուրդը գտնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Դատավոր Կ. Բեգլարյանի տված բացատրությամբ և գործի նյութերով հաստատված է, որ վերջինս թիվ 1707/02/2009 քաղաքացիական գործով հայցվորի ներկայացուցիչ Վ. Հայրապետյանին իր դիմումի համաձայն դատական նիստի արձանագրության պատճեն տրամադրելու համար, նրանից պահանջել է ներկայացնել անդորրագիր՝ 1450 ՀՀ դրամ պետտուրք վճարելու վերաբերյալ, այնուհետև ստանալ արձանագրության պատճեն:

Համաձայն քաղ. դատ. օր. 139-րդ հոդվածի 3-րդ մասի՝ դատական նիստի պարզ թղթային եղանակով արձանագրման դեպքում գրավոր արձանագրության պատճենը գործին մասնակցող անձանց գրավոր դիմումի հիման վրա տրամադրվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը: «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է առաջին աստիճանի դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճարելի բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը: Նշված հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենը (կրկնօրինակը) գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար գանձվում է բազային տուրքի 50 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 15 տոկոսի չափով գումար:

Վերոգրյալից ակնհայտ է, որ հոդվածը սպառիչ կերպով թվարկում է դատարանի կողմից տրվող փաստաթղթերի դիմաց գանձվող պետտուրքի հիմքերը, սակայն դրանց կազմում դատական նիստի արձանագրության պատճենը ստանալու

դիմաց պետտուրքի գանձում նախատեսված չէ: Մինչդեռ դատավոր Կ. Բեգլարյանի կողմից վկայակոչվել են հոդվածներ «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքից, որոնք չեն կարող հիմք հանդիսանալ պետտուրք գանձելու համար:

Բացի այդ, ԼՂՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող հարկադրել կրելու պարտականություններ, որոնք սահմանված չեն ԼՂՀ Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Արդարադատության խորհուրդը գտնում է, որ օրենքի նորմերի կոպիտ և ակնհայտ խախտումներ են արդարադատության իրականացման ընթացքում ԼՂՀ Սահմանադրության, օրենքների նորմերի այնպիսի էական խախտումները, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել անձանց՝ վերոհիշյալ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների և ազատությունների կոպիտ սահմանափակմանը, դրանցից զրկելուն, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը խոչընդոտելուն և ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ և օրինական որոշման կայացմանը:

Վարույթին կից նյութերի զննությամբ Արդարադատության խորհուրդը հաստատված է համարում նաև այն փաստը, որ Կ. Բեգլարյանի կողմից խախտվել է քաղ. դատ. օր. 80-րդ, 86-րդ, 134-րդ և 136-րդ հոդվածները: Համաձայն վերը նշված օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի՝ հակընդդեմ հայցը հարուցվում է հայց հարուցելու ընդհանուր կանոններով: ԼՂՀ քաղ. դատ. օր. 80-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը նույն օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով հայցադիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում հայցադիմումի ընդունումը չմերժելու կամ չվերադարձնելու դեպքում կայացնում է դա ընդունելու մասին որոշում, որում նշվում է նաև գործի քննության ժամանակը և վայրը: Նույն օրենսգրքի 136-րդ հոդվածի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշումը պատշաճ ձևով ուղարկվում է գործին մասնակցող անձանց՝ որոշումը կայացնելու օրվանից եռօրյա ժամկետում:

Հակընդդեմ հայցն վարույթ ընդունելու, քաղաքացիական գործ հարուցելու և այն դատական քննության նշանակելու մասին Կ. Բեգլարյանի կողմից կայացվել է որոշում, որը թվագրվել է 2010թ. փետրվարի 11-ին և թիվ 1707/02/2009թ. քաղաքացիական գործում կարվել է 38ա համարի տակ: Սակայն ինչպես երևում է գործի նյութերից՝ դատավորի կողմից վերը նշված որոշումը կայացվել է ավելի ուշ՝ թույլ տրված խախտումները քողարկելու համար, որը պատշաճ ձևով չի ուղարկվել կամ հանձնվել կողմերին:

Քաղ. դատ. օր. 134-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացվող որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ: Վերոգրյալը նշանակում է, որ դատարանը պետք է նշի իր բոլոր եզրահանգումների իրավական հիմքը և դա պետք է նշի հստակ և ճիշտ:

Սակայն առաջին աստյանի դատարանի 2009թ. նոյեմբերի 6-ի որոշումը՝ հայցադիմումը վերադարձնելու մասին, փաստացի գրվել է քաղ. դատ. օր. 77-րդ, 82-րդ և 134-րդ հոդվածների հիման վրա, իսկ որոշման եզրափակիչ մասում նշվել են օրենսգրքի 87-րդ, 92-րդ և 144-րդ հոդվածները, այսինքն՝ նախկինում գործող քաղ. դատ. օր. նույնաբովանդակ հոդվածները: Դատարանը նույնանման խախտում է կատարել նաև 2010թ. փետրվարի 03-ի՝ քաղաքացիական գործ հարուցելու և դատական քննության նշանակելու մասին որոշման եզրափակիչ մասում, քաղ. դատ. օր. 77-րդ և 80-րդ հոդվածների փոխարեն նշելով օրենսգրքի 87-րդ և 90-րդ հոդվածները:

ԼՂՀ դատական օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դատական իշխանություն իրականացնելիս դատավորը պարտավոր է գործը քննելիս և լուծելիս ապահովել պատշաճ մասնագիտական պատրաստվածություն:

Տվյալ պարագայում դատավորի մեղավորությունն առկա է, քանի որ նա չի դրսևորել բավարար ուշադրություն և շրջահայացություն, որի արդյունքում չի պահպանվել օրինականության սկզբունքը:

Արդարադատության խորհուրդը գտնում է, որ դատական ակտը, որը պարունակում է նյութական և դատավարական օրենքի նորմերի խախտումներ, չի կարող կայացվել դատավորի մեղքի բացակայությամբ: Իսկ դատական նիստի արձանագրության պատճեն օրենքով սահմանված կարգով և ժամկետում տրամադրելու պարտականությունը կրում է դատարանը: Տվյալ պարագայում դատավորի մեղավորությունն առկա է, քանի որ նա ժամանակին չի ապահովել կողմի իրավունքները, որի արդյունքում անհարկի սահմանափակել է այն, որը նախատեսված է քաղ. դատ. օր. 23-րդ և 134 հոդվածներով և օրենքով չնախատեսված լրացուցիչ պարտավորություն առաջադրելով նրան: Արդյունքում արդարադատություն իրականացնելիս չի պահպանվել օրինականության սկզբունքը, և թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի ակնհայտ և կոպիտ խախտումներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ԼՂՀ դատական օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 105-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 109-րդ և 111-րդ հոդվածներով՝ Արդարադատության խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արդարադատության նախարարի միջնորդությունը բավարարել: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստյանի դատարանի դատավոր Կ. Բեզլարյանին հայտարարել նախազգուշացում:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կ. ՂԱՐԱՅԱՆ

Կ. ՍԱՂՅԱՆ

Հ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Մ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Կ. ՄԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Շ. ՍԱՖԱՐՅԱՆ

Մ. ՍԱՖԱՐՅԱՆ